ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 14.11.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/67

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 17.10.2017թ. թիվ 03/26-3/18828-17 գրությամբ «Սասունասար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 14.08.2017թ. թիվ 01/61-16239 գրության հիման վրա, 17.10.2017թ. թիվ 03/26-3/18828-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Սասունասար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. **«Սասունասար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը**

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 18.10.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/18860-17 գրությամբ կարծիք ստանալու նպատակով դիմել է «Սասունասար» ՍՊԸ-ին, սակայն վերջինս Խորհրդին չի ներկայացրել իր դիրքորոշումը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 24.10.2017թ. ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել իր մասնակցությունը, ով հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի և «Սասունասար» ՍՊԸ-ի միջև 17.08.2017թ. կնքվել է «ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-17/4» ծածկագրով կապալային աշխատանքների գնման պայմանագիր, համաձայն որի «Սասունասար» ՍՊԸ-ն պարտավորվել է կատարել Երևան քաղաքի ինքնակամ կառույցների քանդման աշխատանքները: Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության 08.09.2017թ. հերթական գրավոր պատվեր-առաջադրանքի համաձայն՝ Ընկերությունը Աջափնյակ վարչական շրջանի Մարգարյան 2-րդ նրբ. թիվ 9 շենքի թիվ 4 և 5 ավտոտնակների 2-րդ հարկի ինքնակամ կառուցված պատերի քանդման աշխատանքներ պետք է իրականացներ: Սակայն նշված կառույցի սեփականատերը հայտնել է, որ դիմում է ներկայացրել ուղղված Երևանի քաղաքապետին և խնդրել է սպասել մինչև սեպտեմբերի 14-ը՝ վստահեցնելով, որ բացասական պատասխան ստանալու դեպքում անձամբ կքանդի կառուցված պատերը, սակայն Պատվիրատուն պնդել է, որ Ընկերությունը շարունակի քանդման աշխատանքները:

Ընկերությունը Խորհրդին հայտնել է նաև, որ «Սասունասար» ՍՊԸ-ն չի կարողացել իրականացնել Պատվիրատուի վերը նշված պատվեր-առաջադրանքը, քանի որ կառուցապատողը սպառնացել է ինքնահրկիզմամբ՝ ի հավաստումն նշվածի Խորհրդին ներկայացնելով միջադեպին վերաբերող լուսանկարներ:

Նիստի ժամանակ Խորհուրդն արձանագրել է, որ Պատվիրատուն չի ապահովել համապատասխան պայմաններ, որպեսզի Ընկերությունը առանց խոչընդոտների և միջադեպերի կարողանա իրականացնել Պայմանագրով իր վրա դրված պարտականությունները:

3. Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

Երևանի քաղաքապետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 11.10.2017թ. թիվ 01/61-21406 գրությամբ հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի և «Սասունասար» ՍՊԸ-ի միջև 17.08.2017թ. կնքված «ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-17/4» ծածկագրով կապալային աշխատանքների գնման պայմանագրի 1.1. կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի ինքնակամ կառույցների քանդման աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ «Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի տեխ. բնութագրին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան»:

Պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ «Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ մինչև 2017թ. դեկտեմբերի 29-ը»:

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

Պայմանագրի 3.1.2 կետի համաձայն՝ «Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը»:

Պայմանագրի 3.4.1 կետի համաձայն՝ «Աշխատանքները կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով

մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ Տեխնիկական բնութագրին և ծավալաթերթին համապատասխան»:

Պայմանագրի սահմանված տեխնիկական բնութագրի 8-րդ կետի համաձայն՝ «Կատարման ենթակա աշխատանքները կրում են ամենօրյա բնույթ, դրանք պետք է իրականացվեն գնման պայմանագրով նախատեսված ամբողջ ժամկետում՝ 24 ժամյա ռեժիմով, որոնցից յուրաքանչյուրի իրականացման սկիզբը և այլն կատարելու ժամկետը կնշվի համապատասխան պատվեր-առաջադրանքում: Այն ենթակա է կատարման կապալառուի կազմակերպության տեխնիկական միջոցների և մասնագետների միջոցով»:

Պայմանագրի սահմանված տեխնիկական բնութագրի 7-րդ կետի համաձայն՝ «Վերը նշված 1-4-րդ կետերի բոլոր քանդման (կամ ապամոնտաժման) աշխատանքները ենթակա են իրականացման Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության պետի կողմից՝ յուրաքանչյուր դեպքի համար, տրվող համապատասխան պատվեր-առաջադրանքի հիման վրա»:

Պատվիրատուն հայտնել է, որ Ընկերությունը խախտել է Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող տեխնիկական բնութագրի վերը նշված կետի պահանջները, այն է՝ Պայմանագրի 8.1.4 կետով նախատեսված պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնող Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչությունը հիմք ընդունելով Պայմանագրի 3.4 կետի պահանջը, 08.09.2017թ. համապատասխան գրավոր պատվեր-առաջադրանք է առաքել Ընկերությանը՝ Stepanyan-andranik@rambler.am պաշտոնական էլեկտրոնային հասցեով, 2017թվականի սեպտեմբերի 8-ին, ժամը 16:28՝ hayk.asatryan@yerevan.am հասցեից, համաձայն որի նախատեսվում էր 2017թ. սեպտեմբերի 8-ից 9-ն ընկած ժամանակահատվածում՝ Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի, Մարգարյան 2-րդ նրբանցքի հ. 9 շենքի հ. 4 և 5 ավտոտնակ հասցեներում իրականացնել գոյություն ունեցող ավտոտնակների 2-րդ հարկի ինքնակամ կառուցված պատերի քանդման աշխատանքներ, որը Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության կողմից հայտնաբերվել է 2017 թվականի սեպտեմբերի 17-ին իրականացված շրջայցի արդյունքում:

Պատվիրատուն հայտնել է նաև, որ նախատեսվող քանդման աշխատանքների իրականացման ու համապատասխան պատվեր առաջադրանքի՝ էլեկտրոնային փոստով առաքման մասին «Սասունասար» ՍՊԸ-ի տնօրեն Անդրանիկ Ստեփանյանը, վարչության աշխատակցի կողմից 2017 թվականի սեպտեմբերի 8-ին լրացուցիչ տեղեկացվել է նաև (094) 20 52 68 հեռախոսահամարի միջոցով:

Վերը նշված վայրում 2017 թվականի սեպտեմբերի 11-ին Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության, հասարակական կարգի պահպանության ծառայության և Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների համատեղ մասնակցությամբ նախաձեռնվել է վերոնշյալ ինքնակամ կառույցի քանդման աշխատանքները, սակայն Ընկերության կողմից չի ապահովվել վերոնշյալ պայմանագրի 3.4.1 ենթակետով կապալառուի համար նախատեսված պարտավորությունը, որի արդյունքում քանդման աշխատանքներն ապահովելու նպատակով ներգրավվել է այլ սուբյեկտ ու իրականացրել ինքնակամ կառույցի քանդման աշխատանքները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան.....»:

Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն պայմանգիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

Կապալառուն խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 469-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե պայմանագրի փոփոխման կամ լուծման համար հիմք է ծառայել կողմերից մեկի թույլ տված պայմանագրի էական խախտումը, մյուս կողմն իրավունք ունի պահանջել հատուցելու պայմանագրի փոփոխմամբ կամ լուծմամբ պատճառված վնասները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պատվիրատուն հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանը ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվել է Ընկերության հետ կնքված Պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված:

Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ գրությունը, օրենսդրական պահանջի համաձայն հրապարակվել է www.gnumner.am ինտերնետային կայքում:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 24.10.2017թ. ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացրած դիրքորոշումը:

4. <u>ՍՑ-ԱՄ-2017/67 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՍՑ-ԱՄ-2017/67 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1.Երևանի քաղաքապետարանի և «Սասունասար» ՍՊԸ-ի միջև 17.08.2017թ. կնքվել է «ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-17/4» ծածկագրով կապալային աշխատանքների գնման պայմանագիր:

2. Պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Կապալառուն (տվյալ դեպքում՝ «Սասունասար» ՍՊԸ-ն) պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի ինքնակամ կառույցների քանդման աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

3. Պայմանագրին կից հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագրի (այսուհետև՝ Տեխնիկական բնութագիր) 7-րդ կետով սահմանվել է, որ տեխնիկական բնութագրի 1-4-րդ կետերի քանդման (կամ ապամոնտաժման) աշխատանքները ենթակա են իրականացման Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության պետի կողմից՝ յուրաքանչյուր դեպքի համար, տրվող համապատասխան պատվեր-առաջադրանքի հիման վրա:

4. Տեխնիկական բնութագրի 8-րդ կետով սահմանվել է, որ կատարման ենթակա աշխատանքները կրում են ամենօրյա բնույթ, դրանք պետք է իրականացվեն գնման պայմանագրով նախատեսված ամբողջ ժամկետում՝ 24 ժամյա ռեժիմով , որոնցից յուրաքանչյուրի իրականացման սկիզբը և այն կատարելու ժամկետը կնշվի համապատասխան պատվեր-առաջադրանքում և այն ենթակա է կատարման կապալառու կազմակերպության տեխնիկական միջոցների և մասնագետների միջոցով:

5. Պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ «Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ մինչև 2017թ. դեկտեմբերի 29-ը ներառյալ»:

6. Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

7. Պայմանագրի 3-րդ կետի 3.1.3 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին,

սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

8. Պայմանագրի 3-րդ կետի 3.1.4 ենթակետը սահմանում է, որ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետը (ներառյալ օրացույցային գրաֆիկը):

7. ***Պայմանագրի 3.2 կետի 3.2.1 ենթակետը սահմանում է, որ Պատվիրատուն պարտավոր է աշխատանքը կատարելիս աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:***

9. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության պետի 08.09.2017թ. թիվ 19/18559 պատվեր-առաջադրանքի համաձայն՝ Ընկերությունը պետք է իրականացներ Երևան քաղաքի, Աջափնյակ վարչական շրջանի Մարգարյան 2-րդ նրբ. թիվ 9 շենքի թիվ 4 և 5 ավտոտնակ հասցեներում գոյություն ունեցող ավտոտնակների 2-րդ հարկի պատերի քանդման աշխատանքներ՝ 2017 թվականի սեպտեմբերի 8-ից 9-ը ընկած ժամանակահատվածում:

10. Պատվիրատուն 11.10.2017թ. թիվ 01/61-21406 գրությամբ հայտնել է, որ Ընկերության կողմից խախտվել է պայմանագրի 3.4.1 ենթակետով նախատեսված պարտավորությունը, այն է՝ աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ Տեխնիկական բնութագրին և

ծավալաթերթին համապատասխան, ուստի Պատվիրատուն միակողմանի հրաժարվել է Ընկերության հետ կնքված Պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված:

11. Ընկերությունը ՍՑ-ԱՄ-2017/67 պաշտոնական ընթացակարգով տեղի ունեցած նիստի ժամանակ Խորհրդին հայտնել է, որ «Սասունասար» ՍՊԸ-ն չի կարողացել իրականացնել Պատվիրատուի վերը նշված պատվեր-առաջադրանքը, քանի որ կառույցապատողը սպառնացել է ինքնահրկիզմամբ՝ ի հավաստումն նշվածի Խորհրդին ներկայացնելով միջադեպին վերաբերվող լուսանկարներ: Ընկերությունը Խորհրդին հայտնել է նաև, որ միջադեպի ժամանակ դեպքի վայր են ժամանել ոստիկանությունը, շտապ օգնությունը և փրկարար ծառայությունը:

12. Նիստի ժամանակ Խորհուրդն արձանագրել է, որ Պատվիրատուն չի ապահովել համապատասխան պայմաններ, որպեսզի Ընկերությունը առանց խոչընդոտների և միջադեպերի կարողանա իրականացնել Պայմանագրով իր վրա դրված պարտականությունները:

5. <u>Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը</u>

Խորհուրդն, ուսումնասիրելով << ֆինանսների նախարարության 18.08.2017թ. թիվ 03/26-3/15137-17 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 14.08.2017թ. թիվ 01/61-16239 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Սասունասար» ՍՊԸ-ի կողմից ՍՑ-ԱՄ-2017/67 պաշտոնական ընթացակարգով տեղի ունեցած նիստի ժամանակ Խորհրդին ներկայացված փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

<< քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 716-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատվիրատուն պարտավոր է կապալի պայմանագրում սահմանված դեպքերում, ծավալով և կարգով՝ կապալառուին աջակցել աշխատանքները կատարելիս:

Պատվիրատուի կողմից այս պարտականությունը չկատարելու դեպքում կապալառուն իրավունք ունի պահանջել հատուցելու պատճառված վնասները ներառյալ պարապուրդի կամ կատարվող աշխատանքի ժամկետները հետաձգելու կամ պայմանագրում նշված աշխատանքի գինն ավելացնելու պատճառով առաջացած լրացուցիչ ծախսերը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ << գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Երևանի քաղաքապետարանի և «Սասունասար» ՍՊԸ-ի միջև 17.08.2017թ. կնքվել է «ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-17/4» ծածկագրով կապալային աշխատանքների գնման պայմանագիր:

Պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Կապալառուն (տվյալ դեպքում՝ «Սասունասար» ՍՊԸ-ն) պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի ինքնակամ կառույցների քանդման աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագրին կից հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագրի (այսուհետև՝ Տեխնիկական բնութագիր) 7-րդ կետով սահմանվել է, որ տեխնիկական բնութագրի 1-4-րդ կետերի քանդման (կամ ապամոնտաժման) աշխատանքները ենթակա են իրականացման Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության պետի կողմից՝ յուրաքանչյուր դեպքի համար, տրվող համապատասխան պատվեր-առաջադրանքի հիման վրա:

Տեխնիկական բնութագրի 8-րդ կետով սահմանվել է, որ կատարման ենթակա աշխատանքները կրում են ամենօրյա բնույթ, դրանք պետք է իրականացվեն գնման պայմանագրով նախատեսված ամբողջ ժամկետում՝ 24 ժամյա ռեժիմով, որոնցից յուրաքանչյուրի իրականացման սկիզբը և այն կատարելու ժամկետը կնշվի համապատասխան պատվեր-առաջադրանքում և այն ենթակա է կատարման կապալառու կազմակերպության տեխնիկական միջոցների և մասնագետների միջոցով:

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

Պայմանագրի 3-րդ կետի 3.1.4 ենթակետը սահմանում է, որ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն

պատճառված վնասները, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետը (ներառյալ օրացույցային գրաֆիկը):

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության պետի 08.09.2017թ. թիվ 19/18559 պատվեր-առաջադրանքի համաձայն՝ Ընկերությունը պետք է իրականացներ Երևան քաղաքի, Աջափնյակ վարչական շրջանի Մարգարյան 2-րդ նրբ. թիվ 9 շենքի թիվ 4 և 5 ավտոտնակ հասցեներում գոյություն ունեցող ավտոտնակների 2-րդ հարկի պատերի քանդման աշխատանքներ՝ 2017 թվականի սեպտեմբերի 8-ից 9-ը ընկած ժամանակահատվածում:

Պատվիրատուն 11.10.2017թ. թիվ 01/61-21406 գրությամբ հայտնել է, որ Ընկերության կողմից խախտվել է պայմանագրի 3.4.1 ենթակետով նախատեսված պարտավորությունը, մասնավորապես՝ աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ Տեխնիկական բնութագրին և ծավալաթերթին համապատասխան, ուստի Պատվիրատուն միակողմանի հրաժարվել է Ընկերության հետ կնքված Պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված:

Ընկերությունը ՍՑ-ԱՄ-2017/67 պաշտոնական ընթացակարգով տեղի ունեցած նիստի ժամանակ Խորհրդին հայտնել է, որ «Սասունասար» ՍՊԸ-ն չի կարողացել իրականացնել Պատվիրատուի վերը նշված պատվեր-առաջադրանքը, քանի որ Ընկերության կողմից քանդման աշխատանքների իրականացման ժամանակ կառուցապատողը սպառնացել էր ինքնահրկիզմամբ: Ընկերությունը հայտնել է նաև, որ միջադեպի ժամանակ՝ կանխարգելիչ քայլեր ձեռնարկելու նպատակով, դեպքի վայր են ժամանել ոստիկանությունը, շտապ օգնությունը և փրկարար ծառայությունը:

Ընկերությունը որպես վերը նշվածի ապացույց Խորհրդին է ներկայացրել միջադեպին վերաբերող լուսանկարները:

Նիստի ժամանակ Խորհուրդն արձանագրել է, որ Պատվիրատուն ինքնակամ կառույցների քանդման աշխատանքների իրականացման ժամանակ չի ապահովել ոստիկանության ներկայությունը, որպեսզի Ընկերությունը առանց խոչընդոտների և միջադեպերի կարողանար սահմանված ժամկետում իրականացներ Պայմանագրով իր վրա դրված պարտականությունները:

Պայմանագրի 3.2 կետի 3.2.1 ենթակետը սահմանում է, որ ***Պատվիրատուն պարտավոր է աշխատանքը կատարելիս աջակցել Կապալառուին*** պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 716-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***պատվիրատուն պարտավոր է կապալի պայմանագրում սահմանված դեպքերում, ծավալով և կարգով՝ կապալառուին աջակցել աշխատանքները կատարելիս:***

Պատվիրատուի կողմից այս պարտականությունը չկատարելու դեպքում կապալառուն իրավունք ունի պահանջել հատուցելու պատճառված վնասները ներառյալ պարապուրդի կամ կատարվող աշխատանքի ժամկետները հետաձգելու կամ պայմանագրում նշված աշխատանքի գինն ավելացնելու պատճառով առաջացած լրացուցիչ ծախսերը:

Ամփոփելով վերոգրյալը, Խորհուրդն արձանագրում է, որ Պատվիրատուի կողմից խախտվել է Պայմանագրի 3.2 կետի 3.2.1 ենթակետով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 716-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները, քանի որ Պատվիրատուն Պայմանագրի վերը նշված կետի համաձայն պարտավոր էր աջակցել Ընկերությանը Երևան քաղաքի ինքնակամ կառույցների քանդման աշխատանքները կատարելիս՝ տվյալ դեպքում ապահովելով մարդու անվտանգությունը կամ հասարակական կարգի պահպանությունը, որպեսզի Ընկերությունը կարողանար պատվեր-առաջադրանքով սահմանված ժամկետում անխոչընդոտ իրականացներ ինքնակամ կառույցների քանդման աշխատանքները:

Նման պայմաններում Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուն, չստեղծելով համապատասխան պայմաններ՝ Ընկերության կողմից քանդման աշխատանքները

առանց խոչընդոտների և միջադեպերի իրականացնելու համար, փաստացի զրկել է «Սասունասար» ՍՊԸ-ին Պայմանագրով նախատեսված պարտականությունների կատարման հնարավորությունից, ուստի նման փաստական հանգամանքներում Խորհուրդը գտնում է, որ Ընկերությունը թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, հետևաբար «Սասունասար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 17.10.2017թ. թիվ 03/26-3/18828-17 գրությամբ «Սասունասար» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01516603) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ